ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1953 Общественные науки

Մ. Աբգուսմանյան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ 3-ՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Ստոլիպինյան ռեակցիայի ժամանակաշրջանը հանդիսացավ ռևոլյուցիոն գործունեության ծավալման ամենադժվար ժամանակաշրջանը։ Ամբողջ երկիրը պատած էր կախաղաններով՝ «ստոլիպինյան փողկապներով», ամենուրեք վխտում էին պատժիչ զորախմբերն ու ոստիկանական ջոկատները և մահ սրփռում չորս կողմը, բանտերը լցվել էին ռևոլյուցիոներներով, որոնք ենթարկվում էին գազանային խոշտանգումների։ Աննկուն բոլշևիկները էտապով քշվում էին դեպի դաժան աքսորավայրեր։ Փակվել էին բանվորական, դեմոկրատական կազմակերպություններն ու մամուլը։ Ցարական սև ռեակցիան՝ ստոլիպինականությունը,— դա անխնա պատերազմ էր ժողովրդական մասսաների դեմ։ «Ամայացման զազրելիություն» — այսպես են բնորոշել Վ. Ի. Լենինը ու Ի. Վ. Ստալինը ռեակցիայի ժամանակաշրջանը։

Ստոլիպինյան ռեակցիան նոր ուժով մերկացրեց բուրժուական պարտիաների կոնտրռևոլյուցիոն կերպարանքը։ Կադետները մեծագույն գոհունակությամբ ողջունեցին ցարական կառավարությանը, որը սվիններով ու բանտերով «խաղաղություն» էր հաստատում երկրում։ Ուժեղացավ քայքայումը մանր բուրժուական պարտիաների մեջ։ Խուճապահար նահանջեցին մենշևիկները, բուրժուազիայի այդ գործակալները բանվորական շարժման մեջ։

Միայն բոլշևիկներն էին, որ հավատարիմ մնացին պրոլետարիատի ու աշխատավոր մասսաների ազատագրման մեծ գործին և շարունակեցին իրենց անխոնջ ռևոլյուցիոն գործունեությունը նաև ստոլիպինյան ռեակցիայի տարիներին։ Պատահական չէ, որ նրանք վաստակեցին «կարծրաքարեր» հռչակավոր անունը։ Բայց ակնհայտ է, որ բոլշևիկները նոր պայմաններում պետք է գործեին նոր տակտիկայով։ Այդ տակտիկան մշակեց պարտիայի առաջնորդ Վ. Ի. Լենինը։ Նա ցույց տվեց, որ բոլշևիկները պետք է կատարեն կանոնավոր նահանջ, պահպանեն իրենց ուժերը, ստեղծեն ամուր անլեգալ պարտիական կազմակերպություններ, և անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցմամբ մասսաներին նախապատրաստեն ռևոլյուցիոն նոր գոտեմարտերի։

Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ պայքարելով պարտիական անլեգալ կազմակերպությունների պահպանման ու ամրապնդման համար, միաժամանակ օգտագործում էին բոլոր լեգալ հնարավորությունները և օրեց-օր ուժեղացնում իրենց աշխատանքը մասսաների մեջ։ Այստեղից էլ բոլշևիկների անհաշտ պայքարը երկու ճակատով. մի կողմից՝ լիկվիդատորների դեմ, որոնք պահանջում էին լիկվիդացնել պարտիական անլեգալ կազմակերպությունները, իսկ մյուս կողմից՝ օտզովիստների դեմ, որոնք դեմ էին լեգալ հնարավորությունները օգտագործելու և հատկապես պահանջում էին հետ կանչել Պետական դումայի բոլշևիկ դեպուտատներին։ Այդ երկու ուղղություններն էլ վերջին հաշվով հետապնդում էին մի նպատակ — լիկվիդացնել ռևոլյուցիոն պարտիան

և զինաթափ անել բանվոր դասակարգին։ Բոլշևիկները ռեակցիայի դաժան պայմաններում հմտորեն կիրառելով անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցման ճկուն տակտիկան, օգտագործեցին ամեն մի լեգալ միջոց և եռանդուն գործունեություն ծավալեցին մասսաների մեջ, նրանց դաստիարակելով ռևոլյուցիայի ոգով։

Լեգալ հնարավորությունների օգտագործման ձևերից մեկը Պետական դումայի ընտրական կամպանիան էր և ապա դումայի տրիբունան, որպես գործիք ցարիզմի ներքին ու արտաքին քաղաքականությունը մերկացնելու, ռևոլյուցիոն ագիտացիա ծավալելու համար։

Բոլշևիկները առաջնորդվելով ռևոլյուցիայի անկման ժամանակ Պետական դումայի տրիբունան օգտագործելու տակտիկայով, մասնակցեցին 2-րդ, 3-րդ և 4-րդ Պետական դումաներին, հանդես եկան ինքնուրույն պլատֆորմներով և ցուցաբերեցին բուրժուական պառլամենտարիզմի օգտագործման հիանալի օրինակ։

* * *

Ստոլիպինյան սև ռեակցիայի ժամանակավոր հաղթանակը ռևոլյուցիայի նկատմամբ իր պաշտոնական ձևակերպումն ստացավ 1907 թվականի հունիսերեքյան պետական հեղաշրջման մեջ։ Ցարական կառավարությունը ցրեց 2-րդ Պետական դուման և խախտելով 1905 թ. հոկտեմբերի 17-ի իր սեփական մանիֆեստը, նոր օրենք հրատարակեց 3-րդ Պետական դումայի ընտրությունների մասին։ 2-րդ Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան դատի տրվեց ու աքսորվեց Սիբիր։

Նոր ընտրական օրենքը նպատակ ուներ ամրապնդել կալվածատերերի ու առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի դիրքերը։ Ցարիզմը մասսաների դեմ մղվող պայքարում էլ ավելի սերտ բլոկի մեջ մտավ կոնտրռևոլյուցիոն բուրժուազիայի հետ։ Ահա թե ինչու, հունիսի 3-ի օրենքը կալվածատերերի ընտրողների թիվն ավելացնում էր 5 անգամ, բուրժուազիայինը՝ 7 անգամ, իսկ բանվորների ու գյուղացիների ընտրողների թիվը, ընդհակառակը, կրճատվում էր ավելի քան 2 անգամ։

Էլ ավելի վատթարացավ ազգային ծայրամասերի վիճակը, որոնք կամ բոլորովին զրկվեցին դեպուտատներ տալու իրավունքից և կամ խիստ կրճատվեց նրանց թիվը։ Մեծապետական շովինիզմի այդ քաղաքականությամբ Լեհաստանը 35 դեպուտատի փոխարեն կարող էր ուղարկել միայն 12 դեպուտատ (որոնցից 2-ը անպայման ռուս), Կովկասը 29-ի փոխարեն 10-ը (որոնցից 1-ը անպայման ռուս), Միջին Ասիան բոլորովին զրկվում էր ընտրական իրավունքից։ Ընդհանուր առմամբ, եթե եվրոպական Ռուսաստանը դումայում ուներ 403 դեպուտատական տեղ, ապա «ծայրամասերն» միայն 39 տեղ։

Չնայած հունիսերեքյան ընտրական օրենքի հակադեմոկրատական բնույթին, որին միանում էր ցարական իշխանությունների տեռորի ու վայրի կամայականության քաղաքականությունը, այնուամենայնիվ բոլշևիկները որոշեցին մասնակցել 3-րդ Պետդումայի ընտրություններին ու ծավալել եռանդուն ռևոլյուցիոն աշխատանք։

Բոլշևիկների նախընտրական կամպանիան ղեկավարում էր Լենինը։ 1907 թ. հուլիսի 21—23-ը Կոտկայում (Ֆինլանդիա) տեղի ունեցավ ՌՍԴԲՊ

3-րդ կոնֆերենցիան, որը քննարկեց տակտիկական հարցեր՝ կապված 2-րդ Պետդումայի ցրման և 3-րդ Պետդումայի գումարման հետ։ Կոնֆերենցիան ձայների մեծամասնությամբ ընդունեց Լենինի առաջադրած բանաձևը՝ 3-րդ Պետական դումայի ընտրություններին մասնակցելու մասին։ Այնտեղ մատնանշվում է, որ պետք է պայքարել ինչպես ցարական ինքնակալության, այնպես էլ կադետների դեմ, որոնք թաքնվում են դեմոկրատական ֆրազների տակ։ Դումայական կամպանիան պետք է օգտագործել մասսաների ռևոլյուցիոն դաստիարակության համար։

Լենինյան դրույթները դարձան գործողության ծրագիր, ինչպես ողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի բոլշևիկների համար։ Հայտնի է, որ ստոլիպինյան դաժան ռեակցիան ընդգրկեց նաև Անդրկովկասը։ Ցարիզմն իր ռեակցիոն քաղաքականությունն Անդրկովկասում իրականացնում էր հենվելով հայկական բուրժուազիայի, վրացական ազնվականության և ադրբեջանական բեկերի վրա։ Այդ ստոր գործում ցարիզմի վարձու ծառաներն էին բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ դաշնակցականները, վրացական մենշևիկները, ադրբեջանական պանիսլամիստները և այլն։

Չնայած ստոլիպինյան ռեակցիայի դաժան պայմաններին, Անդրկովկասի բոլշևիկները ծավալեցին անխոնջ ռևոլյուցիոն գործունեություն և մասսաներին նախապատրաստեցին նոր մարտերի։ Այդ ժամանակաշրջանում Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների կենտրոնակետը Բաքուն էր, որտեղ գործում էին Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը և ուրիշներ։ Բոլշևիկյան ամուր կազմակերպության ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը ռեակցիայի տարիներին հերոսական պայքար է մղում և հանդես գալիս համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժման առաջին շարքերում։

Օգտագործելով լեգալ հնարավորությունները Անդրկովկասի բոլշևիկները հսկայական աշխատանք կատարեցին 2-րդ Պետական դումայի ցրման և 3-րդ Պետական դումայի ընտրությունների կապակցությամբ։ Բացահայտելով հունիսերեքյան հեղաշրջման կոնտրռևոլյուցիոն էությունը «Բակինսկիյ Պրոլետարի» թերթը, իր 1907 թ. № 1-ի առաջնորդողում գրում էր. «Պրոլետարիատի առաջ առավել ևս մեծ պարզությամբ է ծառանում ցարական իշխանությունը տապալելու խնդիրը։ Հապա մտածեք։ Եղավ առաջին դուման։ Եղավ նաև երկրորդը։ Բայց ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը չլուծեց ռևոլյուցիայի հարցերից ոչ մեկը— և չէր էլ կարող լուծել։ Եվ դարձյալ գյուղացիները մնում են առանց հողի, բանվորները՝ առանց ութ ժամյա աշխատանքային օրվա, բոլոր քաղաքացիները՝ առանց քաղաքական ազատության»։

Երրորդ Պետական դումայի ընտրությունների բոլշևիկյան կամպանիան Բաքվում անմիջականորեն գլխավորում էր Ի. Վ. Ստալինը։ Նա գրեց «Նակազ երրորդ Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական դեպուտատներին», որը 1907 թ. սեպտեմբերի 22-ին ընդունվում է Բաքվի բանվորական կուրիայի լիազորների ժողովում և հրատարակվում առանձին թերթիկով։ Նակազը բացահայտում է բոլշևիկների պառլամենտական տակտիկայի էությունը։ Այնտեղ ցույց է տրվում, որ դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան պետք է վարի հետևողական պրոլետարական գիծ և իր ամբողջ գործունեությունը համաձայնեցնի պարտիայի ընդհանուր քաղաքականության հետ, «ենթարկվի նրա ղեկավարությանն ու պարտիայի ԿԿ-ի դիրեկտիվներին»։

Բոլշևիկները ընտրական կամպանիայում մեծ հաղթանակ տարան մենշևիկների դեմ և Բաքվի բանվորական կուրիայում երրորդ Պետական դումայի ընտրողներ ընտրվեցին բոլշևիկներից։

Այդ լուրջ ու դժվար գործում ընկեր Ստալինի հետ միասին անգուլ աշխատանք ծավալեց Ստ. Շահումյանը։ Նա, ՌՍԴԲՊ 5-րդ համագումարից հետո, աշխատելով Բաքվում, ոչ մի ջանք չի խնայում անլեգալ պարտիական կազմակերպության ամրապնդման համար մղվող պայքարում։ Շահումյանը Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ էր և պրոլետարական մասսաների տաղանդավոր կազմակերպիչ։ Նա ղեկավար մասնակցություն էր ցույց տալիս «Բակինսկի Ռաբոչի», «Բակինսկի Պրոլետարի», «Գուդոկ» թերթերի հրատարակությանը։ Շահումյանը միաժամանակ ժողովրդական տների վարիչ էր և հմտությամբ էր օգտագործում լեգալ հնարավորությունները։

Ստ. Շահումյանը 3-րդ Պետդումայի նախընտրական կամպանիայի ժամանակ եռանդուն աշխատանք ծավալեց հօգուտ բոլշևիկյան պլատֆորմի։ Նա համարյա ամեն օր հանդես էր գալիս զեկուցումներով ու հոդվածներով, գրում մարտական թռուցիկներ, կազմակերպում գործադուլներ ու միտինգներ։ Ամենուրեք Շահումյանը մերկացնում էր մենշևիկներին, էսեռներին, դաշնակցականներին, «սպեցիֆիկներին», «հնչակյաններին» և բանվորներին կոչ անում քվեարկել բոլշևիկյան թեկնածուների օգտին։

Բաքվի բոլշևիկյան կոմիտեն 1907 թ. աշնանը հաջողությամբ անցկացրեց 3-րդ Պետական դումայի ընտրական կամպանիան և սեպտեմբերի 22-ին բանվորների լիագորների ժողովում պատվիրակներ ընտրվեցին բոլշևիկ-բանվորներ։ Նույնիսկ պաշտոնական մամուլը հարկադրված էր խոստովանել ու զայրույթով արձանագրել, որ ընտրված թեկնածուներն առաջադրված են «բոլշևիկների ֆրակցիայի կողմից»։

Բայց դրանով չվերջացավ ընտրական կամպանիան։ Բանվոր պատվիրակները պետք է մեկնեին Գանձակ (այժմ Կիրովաբադ) և մասնակցեին պատվիրակների նահանգական ժողովին, ուր և պետք է առաջադրվեր դումայի դեպուտատը։ Ստ. Շահումյանը ղեկավար մասնակցություն է ունենում ոչ միայն Բաքվի բանվորական կուրիայի ընտրական կամպանիային, այլև Անդրկովկասում ծավալված դումայական պայքարին։ Մնացել են Ստեփան Շահումյանի հոդված-հիշողություններ, որը կոչվում է «Ինչպես պ-րն Հ. Սաղաթելյանը ինքն իրեն մի ձայնով ընտրեց երրորդ Պետական դումայի անդամ»։ Այդ հիշողությունները գրված են 4-րդ Պետական դումայի ընտրությունների նախօրյակին, որտեղ Շահումյանը պատմում է, թե ինչպես ինքը 3-րդ Պետական դումայի պատվիրակ չի եղել, բայց ակտիվ կերպով մասնակցել է ամբողջ ընտրական պայքարին ու ժողովներին[1]։ Միաժամանակ մնացել են բոլշևիկ Ա. Մռավյանի հիշողությունները «Ընկ. Շահումյանը Գանձակում» վերնագրով[2], որտեղ տրվում է բոլշևիկների ընտրական պայքարի նկարագրությունը և Ստ. Շահումյանի դերն այդ պայքարում։ Հետաքրքիր են նաև նահանգական ժողովի մասնակից, Նոր-Բայազետի պատվիրակ ուսուցիչ Ա. Մ. Աբրահամյանի հի-

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, դ. 101, թ. 1։

[2] Տես «Խորհրդային Հայաստան», № 216, 19/9, 1926։

շողությունները[1], որտեղ նա խոսում է իր առաջին հանդիպման մասին Ստ. Շահումյանի հետ։

Ինչպես արդեն մատնանշել ենք, հունիսներեքյան ընտրական օրենքով է՛լ ավելի կրճատվեցին ազգային շրջանների իրավունքները։ Անդրկովկասում այդ ցայտուն կերպով արտահայտվեց նաև հայերի նկատմամբ։ Այստեղ կազմվեց վեց ընտրական օկրուգ. Անդրկովկասի ռուս բնակչությունից՝ 1 հոգի, Թիֆլիսի նահանգից՝ 1 հոգի, Քութայիսի նահանգից՝ 1 հոգի, Կարսի, Բաթումի մարզերից և Սուխումի օկրուգից՝ 1 հոգի, Բաքվի, Ելիզավետապոլի և Երևանի նահանգներից՝ 2 հոգի, ընդ որում դրանցից մեկը պետք է անպայմանորեն ընտրվեր ադրբեջանական բնակչությունից, իսկ մյուսը՝ հայ և մնացած ազգերի բնակչությունից։ Այսպիսով, Հայաստանին առանձին ընտրական օկրուգ չէր տրվում և նա իր թեկնածությունը պետք է առաջադրեր 3 նահանգների ընդհանուր օկրուգում՝ մնացած բնակչության (հրեա, վրացի և այլն) հետ միասին։

Ընդհանուր առմամբ Անդրկովկասից դեպուտատների թիվը կրճատվեց 14 մարդով՝ համեմատած 2-րդ Պետական դումայի հետ. ընդ որում, եթե Երևանի նահանգից՝ 2-րդ դումայի համար ընտրվելիս 3 դեպուտատ (2-ը հայ, մեկը ադրբեջանցի), ապա այժմ 3-րդ դումայի համար առաջադրվեց 2 դեպուտատ, բայց երեք նահանգներից (Երևանի, Բաքվի, Ելիզավետապոլի) միասին վերցրած։ Բնորոշ է նաև այն, որ հայ ընտրողները և Բաքվի բանվորները պետք է առաջադրեին մեկ դեպուտատ։ Անդրկովկասի ժողովուրդների մեջ ազգային թշնամանք ու երկպառակություն բորբոքելու և դրա մեջ Բաքվի բանվորների հուժկու ձայնը խլացնելու համար ցարական կառավարությունը Բաքվի, Երևանի և Ելիզավետապոլի նահանգները միավորել էր մի ընտրական տեղամասի մեջ և կրճատել նրա իրավունքները։

Այսպիսով, հանգամանքների բերումով բոլշևիկների ընտրական կամպանիան, որ ծավալվել էր Բարվում, պետք է շարունակվեր Գանձակում, ուր Բաքվի բոլշևիկյան կոմիտեի կողմից գործուղվեցին Ստ. Շահումյանը ու Աս. Մռավյանը։

Ընտրությունները բանվորների ու գյուղացիների համար բազմաստիճան էին։ Երևանի, Գանձակի և Բաքվի նահանգների պատվիրակները պետք է 1907 թ. հոկտեմբերին հավաքվեին Գանձակում և նահանգապետի ցուցումներով անցկացնեին ընտրությունների վերջին տուրը։ Եկել էին ընդամենը 25 պատվիրակ։

25 պատվիրակներից 4-ը բոլշևիկ բանվորներ էին՝ (3-ը ռուս՝ Բոկով, Տրոնով, Մորդովցև, մեկը հայ՝ Արշակ Արկերյան, որոնց ընտրել էր Բաքվի նավթարդյունաբերական բանվորությունը), 1 հոգի ուսուցիչ դարձյալ սոցիալ-դեմոկրատ (Նոր-Բայազետից), 9 հոգի՝ գյուղացիներ (մեծ մասամբ Երևանի նահանգից՝ էջմիածնի շրջանից, Ղարաքիլիսայից և այլն), որոնք անպարտիական էին, 9 հոգի՝ կադետներ (վաճառականներ, կալվածատերեր, գործարանատեր, փաստաբան և այլն, ինչպես նաև 1 եպիսկոպոս՝ էջմիածնից), 2 հոգի՝ դաշնակցականներ։

Մինչ այդ ծավալվել էր բուռն պայքար և պարտիաներից յուրաքանչյուրը ձգտում էր առաջադրել իր թեկնածուն։ Հատկապես կաշվից դուրս էին գալիս հայ կադետները — «ռամկավարները», որոնք մթագնելով մասսաների դասա-

[1] ՄԻԼՍՍ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, Ա. Մ. Աբրահամյան, «Հանդիպում Ստ. Շահումյանի հետ»։

կարգային ինքնագիտակցությունը պահանջում էին առաջադրել ոչ թե «դասակարգային, նեղ կուսակցական», այլ «համազգային», «ընդհանուր ժողովրդական ներկայացուցիչներ»[1]։ «Մշակ» թերթի առաջնորդողներից մեկում նրա խմբագիր Ա. Քալանթարը քննելով գրում էր. «Մենք կցանկանայինք, որ հայ ընտրյալը լիներ պատկանող մեր առաջադիմակսն, ռամկավարական համախմբումներին, որ նա կարողանար թե թեի տված գործել Ռուսաստանի ժողովրդական ազատության գործողների (կադետների— (ծանոթագրությունն իմն է— Մ. Ա.) հետ, որոնք ձգտում էին ամրացնել պառլամենտական կյանքը Ռուսաստանում և նրա միջոցով տալ Ռուսաստանին նոր օրենսդրություն և նոր քաղաքական կյանք»[2]։ Ակնհայտ է. որ հայ բուրժուա-ռամկավարները դեմոկրատական ֆրազներով ըստ էության իրենց լիակատար համերաշխությունն էին արտահայտում դեպի պառլամենտարիզմն ու ռուսական կադետները, որոնք հանդես էին գալիս որպես ցարիզմի պաշտպաններ և ժողովրդի ոխերիմ թշնամիներ։

Ավանտյուրիստ և ժողովրդասպան դաշնակցականները պաշտոնապես հայտարարեցին, որ բոյկոտում են դուման և նույնիսկ թռուցիկներ տարածեցին, որ քվեատուփերին մոտեցողը ժողովրդի դավաճան է։ Բայց գա չխանգարեց, որ նրանք փաստորեն մասնակցեն ընտրություններին և իրենց պատվիրակներն ուղարկեն Գանձակ։

Պատվիրակների կազմի սոցիալական և քաղաքական խայտաբղետությունը վկայում էր, որ դեպուտատի ընտրության շուրջը պետք է ծավալվեր բուռն պայքար։ Ճիշտ է 5 սոցիալ-դեմոկրատների կողքին կային 9 գյուղացիներ, բայց վերջիններիս մեջ էին նաև կուլակներ, որոնք հակված էին դեպի կադետներն ու դաշնակցականները։ Դրանով էլ դժվարանում էր բոլշևիկ դեպուտատի ընտրությունը, քանի որ դեպուտատությանն համար հարկավոր էր հավաքել առնվազն 13 ձայն։ Ստ. Շահումյանն ընդգծում էր գյուղացիական պատվիրակների մեջ տարվող լուրջ աշխատանքի անհրաժեշտությունը, քանի որ նրանք պետք է «իրենց քվեներով վճռեին, թե ով է լինելու 3 նահանգների ընտրյալը»[3]։

Դեպուտատության թեկնածուի ընտրությունը նշանակված էր 1907 թ. հոկտեմբերի 14-ին, բայց պատվիրակները Գանձակ ժամանեցին ավելի շուտ։

Բաքվի բանվոր պատվիրակների հետ միասին 1907 թ. հոկտեմբերի 10-ին Գանձակ եկան անվեհեր բոլշևիկ Ստ. Շահումյանը, իսկ մի օր հետո՝ Աս. Մռավյանը։ Այդ ժամանակ Ասքանազ Մռավյանը ճանաչված բոլշևիկ էր։ Նա 1907—1908 թթ. աշխատելով Բաքվում ստացել էր պրոֆեսիոնալ ռևոլյուցիոնների կոփվածք։ Ինքը՝ Մռավյանը պրոլետարական Բաքուն համարել է իր «բոլշևիկյան հայրենիքը»[4]։ Գանձակում Ստ. Շահումյանը՝ Աս. Մռավյանի հետ միասին սերտ կապ հաստատեց տեղական բոլշևիկների, ինչպես նաև գիմնազիայի ռևոլյուցիոն աշակերտների հետ և նրանց էլ մասնակից դարձրեց ընտրական կամպանիային, հատկապես գյուղացիների մեջ տարվող աշխատանքին։

Ստ. Շահումյանը պատմում է, որ ինքը «հատկապես եկել էր բանվոր պատվիրակների հետ նրանց համար թարգման և առհասարակ օգնական լի-

---

1 Տես «Մշակ» № 121, 1907, 3 հոկտեմբերի։
2 Տես «Մշակ» № 129, 1907, 12 հոկտեմբերի։
3 ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 101, թ. 3։
4 ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 390, թ. 14։

նելու անծանոթ միջավայրում»[1]։ Բայց պարզ է, որ Շահումյանի աշխատանքը դուրս է գալիս «թարգմանչի» շրջանակներից. նա ոչ միայն մոբիլիզացրեց տեղական բոլշևիկներին, այլև նախապատրաստեց բանվոր պատվիրակների ճառերը և ոգնեց նրանց պայքարելու ընդդեմ բուրժուական ու մանր բուրժուական հոսանքների։ Կադետները և դաշնակցականները Շահումյանի ներկայությունից սարսափ էին զգում և աշխատում էին «ազատվել» նրանից։ Պատվիրակների ժողովի նախագահ՝ կադետ Մ. Պապաջանյանը փորձում էր համոզել, որ ինքը թարգմանչի դեր կկատարի, բայց բանվորները նրան վճռականորեն պատասխանում են. «...գուք organապես անընդունակ կլինեք հասկանալու մեր ճառերը, որպեսզի մեր ուղածի պես թարգմանեք նրանց գյուղացիների համար, և ոչ էլ գյուղացիների ճառերը թարգմանեք մեզ համար»։

Կադետները և դաշնակցականները հարկադրված զիջում են։ Նրանք ահաբեկված պահանջում են, որ Շահումյանը բացի թարգմանությունից ոչ մի ավելորդ խոսք չասի։ Այդ մասին Շահումյանն ինքը հետևյալն է պատմում. «Հետաքրքիր տեսարան էր, երբ որոշումից հետո ինձ կանչեցին ժողովի։ «Պ.-ին ասաց դիմեց ինձ նախագահը,— բանվոր պատգամավորները վիրավորեցին մեզ, չհավատալով մեզ երբև թարգմանի և ցանկացան, որ դուք լինեք նրանց թարգմանը։ Մենք զիջեցինք պատգամավորներին և հրավիրեցինք ձեզ, բայց ի նկատի ունեցեք, որ դուք հրավիրվում եք իբրև թարգման, ոչ մի խոսք ձեր կողմից, լսում եք, ոչ մի խոսք ավելորդ։ Ես ուզում էի պատասխանել, որ ընդունում եմ այդ պայմանը և գուցե ավելացնել մի երկու խոսքով, որ նրանք իզուր են վիրավորանք համարում իրենց համար բանվորների պահանջը։ Բայց հազիվ փորձեցի շրթունքս շարժել, պ. Պապաջանյանը սարսափած սկսեց աղաղակել ոչ մի խոսք, ոչ մի խոսք, միայն իբրև թարգման, ոչ մի խոսք... միևնույն ողորմելի սարսափը արտահայտում էին բոլոր «կադետների» դեմքերը»։

Գնալով մթնոլորտն ավելի շիկանում է։ Կադետներն ու դաշնակցականները ամենուրեք գյուղացի պատվիրակներ են որսում, հարբեցնում ու կաշառում նրանց։ Նրանք սարսափում են բոլշևիկների ազդեցությունից և ամեն կերպ ձգտում են խուսափել հարցերի կոլեկտիվ քննարկումից։ Բայց բանվոր պատվիրակների ճնշման տակ կադետներն ու դաշնակները հարկադրված են լինում 1907 թ. հոկտեմբերի 13-ի երեկոյան հրավիրել բոլոր պատվիրակների ընդհանուր խորհրդակցություն։ Այդտեղ սկսում են հանդես գալ պայքարող պարտիաների ճառախոսները, որոնք պետք է շարադրեին իրենց պլատֆորմները։

Դաշնակցականների անունից սպառնալից տոնով հանդես է գալիս նրանց ներկայացուցիչ Ս. Զավարյանը։ Բայց, ինչպես մատնանշում է Ստ. Շահումյանը, նրա ճառը «վերին աստիճանի անգույն ու միևնույն ժամանակ տարօրինակ ու զարմանալի էր»։ Ս. Զավարյանը մի կողմ թողած իր պարտիայի ծրագրային հարցերի արծարծումը, փորձում է նկարագրել հայերի ծանր վիճակը, նրանց հակադրելով ռուս աշխատավորությանը և սերմանելով ազգային թշնամություն։

Նույնքան «անգույն», «ձանձրալի, միապաղաղ», «խեղճ ու ողորմելի էր» կադետների ներկայացուցչի, գործարանատեր Մ. Ալիբեկյանի ճառը, որը բռնված «դեպուտատ» դառնալու մանիայով, խնդրում էր ձայն տալ իրեն։ «Մշակական» Հ. Առաքելյանը առաջ քաշեց իր թեկնածությունը և ջատագովեց

[1] ՄԷՀՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 7, գ. 101, թ. 6։
[2] Նույն տեղում, ֆ. 7, գ. 101, թ. 7։

ցարական կարգերը. «Մենք կողմնակից ենք երկրի կառավարմանը ցարի կողմից՝ Պետական դումայի հետ միասին» — ասում է նա։ Նրա այդ հայտարարությունն առաջ է բերում բանվոր ու գյուղացի պատվիրակների խոր զայրույթն ու սուր իրոնիան։

«Բայց,— ասում է Ստ. Շահումյանը,— որքան անգույն ու մեռած էին դաշնակցական ու կադետների ճառերը (նրանք խոսում էին ակամայից), այնքան վառվռուն, խելացի ու զգացված խոսքեր բանվորների ներկայացուցիչը»։ Բանվորների անունից հանդես եկավ Ի. Վ. Բոկովը[1], որի ճառը կազմել ու նախապատրաստել էր Ստ. Շահումյանը։

Բոկովը ամենից առաջ դիմակազերծ է անում դաշնակցական Զավարյանի «անպատվաբեր դիպլոմատիան», ցույց տալով, թե ինչպես դաշնակցականներն իրենց կեղծավորաբար անվանում են ռևոլյուցիոն ու սոցիալիստ, նույնիսկ չեն խորշում իրենց ծրագրում ռևոլյուցիոն պահանջներ հռչակելուց, բայց փաստորեն հանդիսանում են ժողովրդի թշնամիներ։ Բանվոր պատվիրակը մերկացնում է Զավարյանի նացիոնալիստական դիրքորոշումը և ցույց է տալիս, որ ցարիզմի պայմաններում բոլոր ազգերի աշխատավորները ենթարկվում են անլուր շահագործման. «Ռուս գյուղացին նույնքան խորթ զավակ է ռուս կառավարության համար, ինչքան և հայ, վրացի, թյուրք և այլ գյուղացիներ»[2]։ Նա մանրամասնորեն պատմեց, թե ինչպես Ռուսաստանում 20 միլիոն գյուղացիներ հողազուրկ են, իսկ 60 միլիոն գյուղացիներ էլ չնչին հողակտորով ապրում են «ամենաթշվառ», «կիսաքաղց կյանքով»։ Հետևաբար, «հայ գյուղացին թշվառ է, աղքատ է, տգետ է ոչ թե այն պատճառով, որ նա հայ է, այլ որովհետև ենթարկված է նույն սոցիալական պայմաններին և խեղդված է նույն ռեժիմի ճիրաններում, ինչ որ ռուս, վրացի, լեհացի և այլ գյուղացիներ»։ Բոկովը միաժամանակ մերկացնում է ցարիզմի ազգատյաց քաղաքականությունը։ Նա անցկացնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի հստակ գիծ, մատնանշում է, որ «հարկավոր է խոսել ներկայումս ոչ թե առանձին ազգային շահերի, այլ ընդհանուր՝ ամբողջ Ռուսաստանի բանվոր և գյուղացի հալածված ժողովրդի շահերի մասին, ոչ թե ազգերի բաժանման ու ատելության, այլ համերաշխության և ընդհանուր կռվի մասին»։ Այդ է բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման միակ փրկարար ուղին։

Բոկովը ոչնչացնող քննադատության է ենթարկում նաև կադետներին, որպես ցարիզմի կամակատարների։ Մերկացնելով նրանց «ժողովրդական ազատության պարտիա» կեղծ ցուցանակը, նա ցույց է տալիս, որ գյուղացիները երբեք հող ու ազատություն չեն ստանա բուրժուազիայից։

Մերկացնելով հայկական բուրժուազիայի պնակալեզներին, Բոկովը համարձակորեն ասում է. «պարոն կադետներն ու դաշնակները պաշտպանում են երկրի կառավարումը ցարի կողմից, այն ցարի, որը ժանդարմների ու տերտերների օգնությամբ ժողովրդին պահում են խավարի ու ստրկության մեջ, որը որպես վամպիր ծծում է ժողովրդի արյունը, թույլատրում է կալվածատերերին ու կապիտալիստներին անպատիժ կերպով թալանել աշխատավոր մարդկանց։ Ինքը՝ ցարը աշխարհի խոշորագույն կալվածատեր է,— ի՞նչպես նա չպաշտպանի «աղքատ մանր կալվածատերերին», որոնք տիրում են միայն հաղարավոր

[1] Իվան Վասիլևիչ Բոկով (1879 – 1952)—հին կոմունիստ, պարտիայի անդամ 1904 թվականից։ Բանվոր-բոլշևիկների փայլուն պլեադայից։

[2] ՄԷԼՄԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 101, թ. 17։

դեսյատին հողի (ծիծաղ), և մարդկային ցեղի այդ վիժվածքը, չբավարարվելով 18 միլիոն ռուբլի «ռոճիկով» արտասվալից խնդրում էր իր կառավարությունից ավելացնել այն (ծիծաղ)։ Կապիտալիստները մեր ոսկորների վրա իրենց համար պալատներ են կառուցում, իսկ երբ մենք՝ ծայրահեղության հասցված բանվորներս, պահանջում ենք ավելացնել աշխատավարձը, ցարը «մեզ օգնության է գալիս դնդակներ չխնայելով»։ Այն ժամանակ, երբ մենք հնարավորություն չունենք թեկուզ շաբաթը մեկ անգամ երեխաներին մի բաժակ կաթ տալ, կապիտալիստները կաթի մեջ են լողացնում իրենց կանանց, որպեսզի նրանց մաշկը դառնա փափուկ ու նուրբ (ծիծաղ).— ո՞ւր է այստեղ արդարությունը»[1]։ Այնուհետև նա կանգ է առնում ցարիզմի դաղութային քաղաքականության, ազգամիջյան կոտորածների վրա և կոչ անում համատեղ պայքար մղել ատելի ինքնակալության դեմ։ Ռուս բանվորի խարազանող խոսքերը տիրող շահագործողական կարգերի, ռուսական արյունարբու ցարի և նրա կատարածների նկատմամբ, մեծագույն գոհունակությամբ են ընդունվում հայ գյուղացիների կողմից։

Բոկովը պարզ ու հստակ, բայց միաժամանակ համարձակ կերպով խոսում է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի ու տակտիկայի մասին, Պետական դումայի բանվորական դեպուտատի անելիքների ու պարտականությունների մասին։ Նա գյուղացիներին համոզում է, որ ժողովրդական մասսաների շահերի միակ պաշտպանը պրոլետարական պարտիան է, որն անհաշտ է դեպի աշխատավորների թշնամիները։ Բոկովը անարգանքի սյունին գամելով կադետներին ու դաշնակցականներին ասում է. «Դուք, պարոններ, Պետական դումա եք գնում, որպեսզի ամրապնդեք ցարի երերուն գահը, իսկ մենք գնում ենք այնտեղ նրա համար, որպեսզի վերջնականապես կործանենք մեզ համար ատելի այդ գահը, իսկ ձեր ցարին նետենք կեղտաջրի մեջ. բայց պարոններ, ես երկյուղ ունեմ, որ դուք էլ ձեր ցարի հետ կընկնեք այնտեղ»։ Այդ խոսքերը մահացու սարսուռ առաջացրին կադետների ու դաշնակցականների մեջ և Զավարյանը զայրույթով գոչեց. «Ահա թե ի՞նչ»։

Բոկովի ճառը, ինչպես մատնանշում է Ստ. Շահումյանը, «շշմեցրեց կադետներին ու դաշնակցականներին և վերին աստիճանի ուժեղ տպավորություն թողեց գյուղացիների վրա»։ Վերջիններս ջերմորեն ողջունում են Բոկովին ու մնացած բանվոր-հռետորներին։ Գյուղացիներից 4 հոգի տեղն ու տեղը հայտարարում են, որ նրանք իրենց քվեները կտան բանվորական թեկնածուներին։ Այդ հաջողության կազմակերպիչը Ստ. Շահումյանն էր, որը ոչ միայն նախապատրաստել էր բանվոր Բոկովի ճառը, այլև թարգմանության ժամանակ հանդես էր գալիս լրացուցիչ դիտողություններով ու մեկնաբանություններով. «Ընկ. Բոկովը,— պատմում է Աս. Մռավյանը,— բոլշևիկ ընտրողների կողմից ծրագրային մի ճառ է ասում, որը հայերեն թարգմանում է ընկ. Շահումյանը։ Այս միակ միջոցն էր բոլոր գյուղացի պատգամավորների հետ տեսնվելու և խոսելու համար։ Շահումյանը լի ու լի օգտագործում է առիթը և շատ ընդարձակ վիճաբանություններով ու հավելումներով թարգմանում ընկ. Բոկովի խոսքը։ Բոկով-Շահումյանի այս ճառում առանձնապես մերկացվում է կադետ-մշակականների հակառևոլյուցիոն պատկերը և դաշնակցականների կասկածելի ռևոլյուցիոնականությունը։ Ստեփանի այս ելույթը շատ դուր է գալիս գյուղա-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, Ա. Մ. Աբրահամյանի հիշողություններ Ստ. Շահումյանի մասին։

դի ընտրողներին և նրանցից ոմանք ափսոսանք էին հայտնում, որ հնար չկա Շահումյանին ղրկելու դումա... Ընկ. Շահումյանն իր մտքերը շարադրում էր բոլորովին հանգիստ, առանց որևէ հուզման։ Նրա համոզեցուցիչ խոսքը և պողպատյա լոգիկան բոլորին հարկադրում էր լսել կենտրոնացված։ Նախագահ Պապաջանովը կանգնեցնում էր նրան, դաշնակներ Ջավարյանը և Սաղաթելյանը կատաղում էին, իսկ Շահումյանը ոնց որ ոչինչ չեղած, մի ակնթարթ կանգնում էր և նորից շարունակում խոսել իր անվրդով տոնով»[1]։ Այդպես էին բանվոր պատվիրակները՝ բոցաշունչ բոլշևիկ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ մաքսիմալ չափով օգտագործում լեգալ հնարավորությունները և ապահովում իրենց հաղթանակը։

Բոլշևիկ պատվիրակները՝ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ որոշում են դեպուտատության թեկնածու առաջադրել Բաքվի պրոլետարիատի աննկուն գավակ, համոզված ռևոլյուցիոներ, բոլշևիկ-բանվոր Արշակ Արկերյանին։ Հին կոմունիստ և պարտիական գործիչ Ն. Կոլեսնիկովան պատմում է, որ ինքը Արշակին հանդիպել է 1907 թ. ամռանը, երբ նա արդեն «լիովին ձևավորված բոլշևիկ էր և ուներ ռևոլյուցիոն անցյալ»[2]։ Արշակ Արկերյանը այն բանվորներից էր, որոնք մինչև իրենց կյանքի վերջը հավատարիմ մնացին աշխատավոր մասսաների ազատագրման մեծ գործին։

Վերջապես մոտենում է վճռական մոմենտը. 1907 թ. հոկտեմբերի 14-ին, ժ. 3-ին նշանակված էին ընտրությունները։ Պայքարող պարտիաներն արդեն նախապատրաստել էին իրենց թեկնածուները. 1) սոցիալ-դեմոկրատներից՝ բանվոր Արշակ Արկերյան, 2) կադետներից՝ Հ. Առաքելյան, 3) դաշնակցականներից՝ Ս. Ջավարյան։ Հանկարծ երևան է գալիս նաև 4-րդ տուփը, որը պատկանում էր դաշնակցական Հ. Սաղաթելյանին։

Համառ պայքարից հետո տեղի են ունենում ընտրությունները, որը սակայն ոչ-ոքի ձայների մեծամասնություն չի տալիս։ Բոլշևիկ պատվիրակների օգտին ձայն են տալիս բացի սոցիալ-դեմոկրատներից (5 հոգի) նաև 4 գյուղացիներ։ Ինչ մնում է դաշնակցական Սաղաթելյանին, ապա բոլորի մեջ ամենից խղճուկ ձայնը նա է ստանում (ընդամենը՝ 5)։

Քանի որ առաջին քվեարկության ժամանակ ոչ ոք չէր ստացել ձայների մեծամասնություն (առնվազն 13), ուստի պետք է կատարվեր նոր ընտրություն։ Այստեղ էլ սկսվում է նոր պայքար։

Դաշնակցականները դիմում են զանազան մեքենայություններին։ Նրանք առերես համաձայնվում են քվեարկել բանվորների օգտին, բայց փաստորեն դեմ են քվեարկում։ Երկրորդ քվեարկության ժամանակ Արկերյանն ու Առաքելյանը ստանում են հավասար ձայներ՝ 12 կողմ և 13 դեմ։ Օրենքը պահանջում էր վիճակ դցել երկուսի միջև, բայց կադետները և դաշնակցականները սարսափում էին դրանից, քանի որ վիճակով կարող էր հաղթել նաև բանվոր-բոլշևիկը։ Նրանք խախտելով ընտրական օրենքը, պահանջում են նոր քվեարկություն։ Կադետները ահաբեկված այն բանից, որ կարող է դեպուտատ ընտրվել բանվորական թեկնածուն, համոզում են Սաղաթելյանին նորից դնելու իր տուփը, որի համար և կքվեարկեն իրենք։ Կադետները Հ. Առաքելյանի բերանով հայտարա-

---

[1] ՄԷՀՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 7։

[2] Н. Колесникова, „Массовики-подпольщики", стр. 11, Москва, 1935. Նկատենք, որ բրոշյուրում Թյուրիմացարար պատվիրակների նահանգական ժողովի վայրը նշվում է Երևանը (էջ 18). ինչպես արդեն ցույց ենք տվել վերևում, Գանձակն էր։

րում են, որ Ա. Արկերյանը «անգրագետ» մարդ է, ու չի կարող ներկայացնել հայ ազգին, քանի որ «բանվորական և պրոլետարական հայրցերից դուրս սա ոչ մի աշխարհայացք չէր արտահայտում»[1]։ Ստեփան Շահումյանը հենց նույն «Մշակ»-ի խմբագրությանը գրած նամակում մերկացնում է կադետների այդ խարդախությունն ու կեղծիքը և ցույց է տալիս, որ չնայած Ա. Արկերյանը չուներ համալսարանական դիպլոմ, բայց Բաքվի 50 հազարանոց բանվորության լավագույն ներկայացուցիչներից մեկն էր, որ 1901 թ. հրապարակային ցույցի ժամանակ ռևոլյուցիայի դրոշ պարզեց և բազմաթիվ անգամ ենթարկվեց ցարիզմի հալածանքներին (5 անգամ բանտարկվել է, մեկ անգամ աքսորվել Բարվից) իր տոկուն և անձնվեր գործունեության համար»։ Ուրեմն, «կադետները տվին իրենց քվեները պ. Սաղաթելյանին... ոչ թե այն պատճառով, որ Արշակ Արկերյանն «անգրագետ» է, իսկ Սաղաթելյանը «գրագետ»...»։ Նրանք այդ արին, որովհետև Արշակ Արկերյանը սոցիալ-դեմոկրատ է և այն էլ «բոլշևիկ» սոցիալ-դեմոկրատ, իսկ պ. Սաղաթելյանը, չնայած իր դաշնակցական իսկական յարլիկին, մի պարզ կադետ է, եթե ոչ հոկտեմբերյան»[2]։

Ընտրական օրենքների կատարյալ խախտմամբ տեղի է ունենում նոր քվեարկություն և 14 ձայնով Սաղաթելյանն «ընտրվում է» Պետդումայի դեպուտատ։ «Այսպես,— բնութագրում է Սաղաթելյանի այդ վարմունքը Ստ. Շահումյանը,— իր մի ձայնի շնորհիվ, ամենախայտառակ դավաճանության միջոցով, նա, «հիվանդ մարդը» ստեղծեց այնպիսի դրություն, որ կադետների ձայների օգնությամբ դարձավ «ժողովրդական ներկայացուցիչ» երրորդ Պետական դումայում»[3]։ Դաշնակցական Հ. Սաղաթելյանի ընտրությունը պետք է բացատրել նրանով, որ կադետները սարսափում էին բանվորական թեկնածուի հաղթանակից և ձայն տվին իրենց եղբայրակցին։ Բանվոր թեկնածուի ընտրությունը վիժեցնելու համար կադետներն ու դաշնակցականները՝ ցարական իշխանությունների գիտությամբ ու հովանավորությամբ ամեն քայլափոխում խախտում էին առանց այն էլ ռեակցիոն, հակաժողովրդական ընտրական օրենքը։ Որպես այդ խախտման օրինակներ կարելի է բերել հետևյալ փաստերը. 1) թեկնածուների ընտրությունը կատարվում էր ոչ թե միաժամանակ, այլ առանձին-առանձին, որի հետևանքով լիովին խախտվում էր «գաղտնի» քվեարկության սկզբունքը և սկսվում էր բացահայտ կոմբինացիաների պրոցեսը, 2) կամայականորեն մերժվեց վիճակ հանելը և նշանակվեց նոր քվեարկություն, 3) ընտրական ժողովը չսկսվեց նախատեսված ժամանակ (ժ. 12-ին), որպեսզի կադետներն ու դաշնակցականները նոր կողմնակիցներ «որսան» և այլն։ Այդ բոլորն օգտագործեցին կադետներն ու դաշնակցականները և բլոկ կազմեցին ընդդեմ բանվորների ու գյուղացիների ներկայացուցչի, որի ընտրության համար ստեղծվել էր ռեալ հնարավորություն։

Չնայած դրան, բոլշևիկները Ստ. Շահումյանի գլխավորությամբ լիակատար բարոյական ու քաղաքական հաղթանակ տարան ընտրական կամպանիայում։ Նրանք մինչև վերջը մերկացրին կադետներին ու դաշնակցականներին, որպես ժողովրդի ոխերիմ թշնամիների և իրենց կողմը գրավեցին գյուղացիական մասսաների ներկայացուցիչներին։ Նրանք ծավալեցին ռևոլյուցիոն ագի-

---

1 «Մշակ», 1907, №№ 132, 134։
2 Տես «Մշակ», 1907, № 134։
3 ՄԷԼՍԻ-ի Հայկական Ֆիլիալի արխիվ, ֆոնդ 7, գ. 11, թ. 18։

տացիա ինչպես պատվիրակների, այնպես էլ Գանձակի բանվորների ու արհեստավորների մեջ։

Գանձակում ծավալված ընտրական կամպանիան Ստ. Շահումյանի գլխավորությամբ ներկայանում է որպես 3-րդ Պետդումայի ընտրությունների առթիվ Բաքվի բոլշևիկյան կոմիտեի կողմից անցկացված ընդհանուր ու լայն կամպանիայի բաղկացուցիչ մասը։ Այդ կամպանիայում տարած ընդհանուր հաղթանակը ամրապնդվեց Բաքվի պրոլետարիատի 1907 թ. նոյեմբերի 22-ի քաղաքական հուժկու գործադուլով, որին մասնակցում էին 50 հազար բանվորներ։ Ամենուրեք տեղի են ունենում մասսայական միտինգներ, ուր բանվորները բոլշևիկների գլխավորությամբ դատապարտում էին ցարական կառավարության դատական գծուծ կոմեդիան 2-րդ Պետդումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի նկատմամբ։

Ճիշտ է, արյունալի տեռորի ու դաժան հալածանքների պայմաններում տեղի ունեցած ընտրությունների հետևանքով Անդրկովկասից 3-րդ Պետական դումայի դեպուտատներ ընտրվեցին միապետական Տիմոշկինը, իշխան Շերվաշիձեն, բուրժուական մոլի նացիոնալիստներ՝ Խասմամեդովն ու դաշնակցական Սաղաթելյանը, բուրժուազիայի վարձկաններ՝ մենշևիկ-լիկվիդատորներ Կ. Զխեիձեն և Ն. Գեգեչկորին, բայց դրանք բոլորը ցարիզմի հլու ծառաներն էին և ոչ մի առնչություն չունեին ժողովրդական մասսաների շահերի ու ձգտումների հետ։

Պետք է ընդգծել, որ դաշնակցական ու կադետ Սաղաթելյանը ամենաողորմելին էր Գանձակում հավաքված 25 պատվիրակների մեջ։ Իր ռեակցիոն գործունեությամբ նա հավատարիմ մնաց ցարիզմին ու բուրժուազիային և ինչպես մատնանշել է Ստ. Շահումյանը, «հայ ազգի բուրժուաները անշուշտ չեն փոշմանել... նրան ուղարկելով Պետերբուրգ։ Նրանից ավելի աջակողմյան, ինչպես և ավելի անզուլ ու անպետք ներկայացուցիչ, նրանք չէին կարող ունենալ դումայում... դաշնակցականներն արժանի են իրենց Սաղաթելյանին»[1]։

Հայտնի է, որ դաշնակցական Սաղաթելյանը դեպուտատ էր նաև 2-րդ Պետդումայում և լինելով ազգարային հարցի գծով հանձնաժողովի անդամ պաշտպանում էր գյուղական համայնքի գաղափարը. «Ես զգում եմ, որ որոշ վտանգ կա համայնքի համար» — ողբում էր Սաղաթելյանը։ «Հատկապես այժմ պետք է ինչ կերպ էլ լինի փրկել համայնքը»։ «Այդ ձևը (այսինքն՝ համայնքը) կարող է ծավալվել — վերածվել համաշխարհային շարժման, որն ի վիճակի է մատնանշելու բոլոր տնտեսական հարցերի լուծումը»[2]։ Վ. Ի. Լենինը Սաղաթելյանի այդ վարքագիծը համարեց «համայնքի պատվարժան ասպետի «արտացավություն» և ընդգծեց, որ «այդ ցանկությունը, անկասկած ռեակցիոն է»[3]։

Դաշնակցական Սաղաթելյանն իր ռեակցիոն կերպարանքը նոր ուժով դրսևորեց 3-րդ Պետդումայում, ուր նա տենդորեն պաշտպանում էր ցարական կառավարության ամեն մի ձեռնարկում, դովերգում նրա արտաքին ու ներքին քաղաքականությունը։

3-րդ Պետական դուման իր կազմով սևհարյուրակային-կադետական էր։ Այնտեղ ապահովված էր բուրժուա-կալվածատիրական մեծամասնությունը, որը հանդիսանում էր ցարիզմի վստահելի հենարանը։ Լենինը այդ մեծամաս-

[1] ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 7, գ. 101, թ. 22։
[2] Քաղվածքները բերում ենք ըստ Վ. Ի. Լենինի Երկերի, հատ. 13, էջ 514։
[3] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 13, էջ 513, 514։

նությունն անվանել է արյունարբու գիշատիչների՝ մաստոդոնտների և իխտիոզավրների բլոկ։ Ցարիզմի հավատարիմ այդ սև դուման առաջինն էր, որ պահպանեց իր գոյությունը մինչև օրենքով նախատեսված ժամկետի լրացումը։ 3-րդ դուման համեմատած 1-ին և 2-րդի հետ, ավելի ցայտուն կերպով դրսևորեց ցարիզմի դասակարգային էությունը։

Չնայած այդ բոլորին 3-րդ Պետդումայի բոլշևիկ-դեպուտատները՝ Պոլետաևի գլխավորությամբ մերկացնում էին ցարական ինքնակալությունը, հանդես գալիս բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների պաշտպանության դերում և աշխատավոր մասսաների ազատագրման կոչ անում։

Այսպիսով, բոլշևիկները մեծագույն հմտությամբ օգտագործեցին 3-րդ Պետական դումայի ընտրական կամպանիան և ապա դումայական տրիբունան՝ ցարիզմի մերկացման ու մասսաների ռևոլյուցիոն դաստիարակության գործում։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը տվեց անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցման փայլուն օրինակ։ Մաքսիմալ չափով օգտագործվեց դումայական կամպանիան՝ մասսաների քաղաքական լուսավորման և նրանց ուժերի մոբիլիզացման համար։ Այդ կամպանիայում խոշոր գեր կատարեց Ստեփան Շահումյանը, որը ջանք չէր խնայում դումայական տակտիկայի լենինյան սկզբունքները կենսագործելու համար։

Նա նույնպիսի տակտիկա էր վարում նաև 4-րդ Պետդումայի ընտրությունների ժամանակ։ Ստ. Շահումյանը պահանջում էր անհրաժեշտ դասեր վերցնել նախորդ փորձից և եռանդուն ռևոլյուցիոն աշխատանք, ագիտացիա ու պրոպագանդա ծավալելով աշխատավոր մասսաների մեջ, ամենուրեք. այդ թվում նաև հայկական գավառներում, հասնել ավելի լուրջ հաջողությունների. «Հարկավոր է մտնել այդ գավառները, մասնակցել տեղն ու տեղը պատվիրակների ընտրություններին և հնչեցնել ամեն տեղ բանվորական մարքսիստական ազդու խոսքը»[1]։

Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Ստեփան Շահումյանի բազմաբովանդակ ռևոլյուցիոն գործունեության ամեն մի քայլը ենթարկված էր աշխատավոր մասսաների ազատագրման գործին՝ շահագործողական կարգերի տապալմանը և կոմունիզմի հաղթանակի մեծ գործին։ Դրա անկապտելի մասն է կազմում դումայական շրջանի նրա անխոնջ աշխատանքը, որը հատկանշական է իր բոլշևիկյան սկզբունքայնությամբ ու ռևոլյուցիոն հետևողականությամբ։

[1] Մ.Լ.Մի-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 101, թ. 20։